

Օտիզմը Հաղթահարեք Հիմա՛ (Defeat Autism Now!) Մոտեցումը Օգտագործող Դարմանագետ Գտնելը. Ի՞նչ Հարցեր Տալ

Ահավասիկ ցանկը մի շարք հարցերի, որոնք թերևս ծնողները ցանկանան տալ ուրիշ ծնողների հետ մասնագետների կամ Օտիզմը Հաղթահարեք Հիմա՛ մոտեցումը օգտագործող դարմանագետի հետ հարցազրույց անցկացնելու մասին խոսելիս: Կարևոր է գիտակցել, որ ARI-ի էջակայքում նշված բոլոր դարմանագետները չունեն նույն փորձը, մարզումը կամ մասնագիտական մարզերը: Օգնելու համար, որ ծնողները գտնեն իրենց և իրենց երեխաների կարիքներին ամենից շատ համապատասխանող մասնագետին, զանազան փորձառու ծնողներ բանաձևել են հետևյալ հարցերը: Դարմանագետի հետ հարցազրույց ունենալիս, թերևս ձեզ անհրաժեշտ լինի կամ ցանկանաք օգտագործել բոլոր այս հարցերը: Հուսով եմք, որ նրանք օգտակար դառնան ձեզ՝ ձեզ և ձեր երեխայի համար լավագույն մասնագետը գտնելու ձեր որոնումների ընթացքում:

1. Ի՞նչը ձեզ մղեց, որ Օտիզմը Հաղթահարեք Հիմա՛ մոտեցումը օգտագործող դարմանագետ դառնաք:
2. Արդյո՞ք ձեր հիվանդներից պահանջվում է օգտագործել հատուկ սննդառեժիմներ, ինչպես՝ GF/CF, SCD, ցածր օքսալադ, և այլն: Ինչո՞ւ:
3. Ե՞րբ էր ձեր վերջին Օտիզմը Հաղթահարեք Հիմա՛ կոնֆերանսը: Արդյո՞ք մասնակցել էք նաև բժիշկների մարզումին: Ի՞նչ էք անում քայլ պահելու համար Օտիզմը Հաղթահարեք Հիմա՛ նոր բուժումների հետ:
4. Մոտավորապես քանի՞ օտիզմ ունեցող անձերի էք բուժել: Ի՞նչ տարիքների:
5. Ինչպե՞ս էք վերաբերվում արյան հավաքման և այլ տարրալուծարանային ստուգումների: Իմ երեխան մարտական է տրամադրված: Խորհուրդ ունե՞ք վայրագ հիվանդների համար:
6. Եթե կենսաբժշկական հրատապ վիճակի մատնվեմք, ինչպե՞ս պետք է կապ հաստատեմ ձեզ հետ:
7. Ձեր հիվանդներին հայտնու՞մ էք ձեր է-նամակի հասցեին, բջջային հեռախոսահամարը, և այլն:
8. Հեռակա հիվանդներին պատրա՞ստ էք հեռախոսով խորհուրդ տալ: Ի՞նչ կլինեն ծախսերը:
9. Կարո՞ղ էք համագործակցել ուրիշ մասնագետների հետ, որոնց հետ գործ պիտի ունենանք (ստամոքսաղիքային, և այլն): Եթե իմ երեխայի մանկաբույժն ընդունի, պատրա՞ստ էք համագործակցել նրա հետ ինչ-որ դարմանումի կամ ստուգման կապակցությամբ:
10. Արդյո՞ք ընծայելու էք լրացուցիչների և դրանք որտե՞ղ գնելու մասին մի հատակ ծրագիր:

11. Ես ուզում եմ գործ ունենալ մի բժշկի հետ, որը ծանր մետաղները հեռացնում է արյան միջից երբ դա անհրաժեշտ է: Արդյո՞ք դուք օտիստիկ հիվանդներին ստուգում եք ծանր մետաղների համար և անհրաժեշտության դեպքում նրանց ընծայում ծանր մետաղները հեռացնող բուժում:
12. Ապահովագրություն ընդունո՞ւմ եք: Եթե չեք ընդունում, կարո՞ղ եք դասավորված և կողավորված ապահովագրական ձևեր մատակարարել:
13. Կարո՞ղ եք հանձնարարել ուղիներ, որոնց շնորհիվ կապ հաստատենք ուրիշ ծնողների հետ, ովքեր հետամուտ են Օտիզմը Հաղթահարեք Հիմա՝ բուժման:
14. Խոսո՞ւմ եք արդյոք որևէ ուրիշ լեզվով:
15. Կարո՞ղ եք ներկայացնել ցանկը բոլոր այն ծառայությունների, որոնք ձեր գրասենյակը ընծայում է տեղում: Օրինակ՝ HBOT, ենթակարմիր սաունա, Սեկրետին IV-ներ, IVIG, Հակավիրուսային բուժումներ, սննդագիտական խորհրդատվություն, արյան հավաքում, և այլն:
16. Դուք գորակցո՞ւմ եք Օտիզմը Հաղթահարեք Հիմա՝-ի ակտիվ ծնողներին՝ ցանցերի միջոցով, համագործակցելով, կոնֆերանսների ժամանակ խոսելով, և այլն:
17. Ինչպիսի՞ր առաջնային բժշկական մասնագիտություններում եք սկզբից մարզվել (օրինակ՝ մանկաբուժություն, ընտանեկան բժշկություն): Ո՞րն է ձեր ներկա գործունեության գլխավոր առարկան: Եթե MD կամ DO չեք, ո՞ր մարզերում եք արտոնագրված:
18. Սկզբնական ժամադրության ընթացքում ինչքա՞ն ժամանակ եք անցկացնում անձի հետ երես-երեսի:
19. Արդյո՞ք վաճառում եք արտոնագրված սննդային լրացուցիչներ կամ ունե՞ք վաճառման համաձայնագիր լրացուցիչ մատակարարողների հետ: Լրացուցիչները իրենց գնո՞վ եք վաճառում:
20. Արդյո՞ք տարրալուծարանային ստուգումների համար հաշվեցույց եք ներկայացնում առևտրական տարրալուծարաններին:
21. Սպասման ցանկ ունե՞ք: Ինչքա՞ն երկար է այն: